Արման Հակոբյան

Ծնվել է 1965թ. սեպտեմբերի 30-ին, Երևանում:

Կրթություն՝

1988 թ. ավարտել է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի արաբագիտության բաժինը՝ 1986-87 թթ. ուսանելով Ամմանի համալսարանում (Հորդանան):

1991 թ. ավարտել է ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի ասպիրանտուրան:

Աշխատանքային գործունեություն՝

1989-1991թթ. ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի արաբական երկրների բաժնի ավագ լաբորանտ,
1991թ.- առ այսօր դասախոս ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետում (արաբերեն, եբրայերեն, դասական ասորերեն, եբրայագիտություն, արամեագիտություն, ասորագիտություն),
1991-1992թթ. ՀՀ ԱԳՆ Մերձավոր Արևելքի բաժնի երրորդ քարտուղար,
1992-1995թթ. Եգիպտոսում ՀՀ դեսպանության երկրորդ քարտուղար,
1995-1997թթ. ՀՀ ԱԳՆ Մերձավոր Արևելքի վարչության արաբական երկրների և Իսրայելի բաժնի առաջին քարտուղար,
1997-1999թթ. ՀՀ ԱԳՆ Մերձավոր Արևելքի վարչության պետ,
1999-2002թթ. ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչության խորհրդական (Նյու Յորք),
2002 Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում ՀՀ ԱԳՆ լիազոր ներկայացուցիչ, արտաքին հարաբերությունների վարչության պետ,
2002-2006թթ. ՀՀ ԱԳՆ սպառազինությունների վերահսկման և միջազգային անվտանգության վարչության պետ,
2006-2011թթ. Կանադայում ՀՀ դեսպանության արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար, Կանադայում ՀՀ գործերի հավատարմատար, Քաղաքական ավիացիայի միջազգային կազմակերպությունում ՀՀ մշտական ներկայացուցիչ (Մոնրեալ),
2011-2020թթ. ՀՀ ԱԳՆ ամերիկյան երկրների վարչության պետ:

Դիվանագիտական աստիճան՝

արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար:

Գիտական գործունեություն՝

բանասիրական գիտությունների թեկնածու (սեմական բանասիրություն):

Հիմնական հրապարակումները՝

- «**Արդի եբրայերեն**» (Երևան, 2003, 2019)
- «**Դասական ասորերեն**» (Երևան, 2005, ռուսերեն թարգմանությունը՝ Классический сирийский язык, Մոսկվա, 2010, անգլերեն թարգմանությունը՝ Classical Syriac, ԱՄՆ, 2019)
- «**Արամեագիտության և ասորագիտության ներածություն**» (Երևան, 2015, անգլերեն թարգմանությունը՝ Introduction to Aramean and Syriac Studies, ԱՄՆ, 2017)

Օտար լեզուներ՝

անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, արաբերեն, եբրայերեն, պորտուգալերեն, լատիներեն:

Ընտանեկան կարգավիճակ՝

ամուսնացած է, ունի երկու դուստր:

2020թ. մարտի 13-ին ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվել է Բրազիլիայի Դաշնային Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան: